ըստ Ստեփաննոս Օրբէլեանի տեղեկութեան, ամուսնացել էր Սիւնեաց նախավերջին Թագաւոր Գրիգոր Բ-ի միակ դուստր եւ ժառանգորդ Կատայի հետ: Իր աներոջ ու նրա Սմբատ եղբօր՝ նոյն տարում վախճանուելուց յետոյ Հասանը դարձաւ Բաղաց Թագաւորութեան վերջին գահակալը, իսկ Բաղաբերդի անկման նախօրէին ստիպուած եղաւ կնոջ եւ ընտանիքի հետ հեռանալ «ի գաւառ իւր եւ ի տուն ի Խաչէն [տարբ. *Խաչէնք*]»[106]*: Նշենք նաեւ, որ Ջալալ Դօլայ Հասանը մի քանի վիմագրերում կոչուած է «Թոռն Բաղաց Թագաւորի» (ընդ որում, այդ բնորոշումը երբեմն վերագրել են նրա կողքին յիշուած կնոջը՝ Մամքանին, որն իրականում Մածնաբերդի Կիւրիկեան արքայադուստր էր)*[107]*: Ի դէպ, նախկինում իր կատարած սխալն ուղղելով, վերը նշուած Խաթունի 1181 Թ. տապանագիրը քննելիս Հասան Մեծի եւ Հասան «Գեռաքարեցու» նոյնութիւնն, ի վերջոյ, ընդունում է նաեւ Բագրատ Ուլուբաբեանը, որը գրում է. «Առաւել հիմնաւոր է ճանաչւում Գարեգին Յովսէփեանի կարծիքը, որի համաձայն՝ Հասանը պէտք է լինէր Գեռաքարի տէր Խաղբակեաններից, եւ նրա արձանագրութիւններն էլ պահպանուել են Գեռաքարի կողմերում՝ նրան ներկայացնելով իբրեւ Խաղբակեան Ջաջուռի եղբօր եւ Խաղբակի որդու (*Գարեգին կաթողիկոս [Յովսէփեան], *Խաղբակեանք կամ Պռօշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 16, 41): Սակայն յիշեալ վարկածներից եւ ոչ մէկը չի հիմնաւորւում աղբիւրագիտականստոյգ նիւթերով: Եւ ահա այս խաչքարի արձանագրութիւնը գալիս է հաստատելու, որ Բաղաց Կապան Թագաւոր գնացած-վերադարձածը, - որն ամուսնացել էր Բաղաց Թագաւորի դստեր հետ, - եղել է Խօխանաբերդի տէր Վախտանգի որդի Հասանը: Ստ. Օրբէլեանի կողմից նրան տուած «գեռաքարեցի» որոշիչը չի խանգարում մեր տեսակէտին, քանի որ Գեռաքարը գտնւում է Խօխանաբերդի մօտ եւ մտնում էր Խօխանաբերդի կամ Ներքին Խաչէնի իշխանութեան տիրոյթների մէջ: Զարմանալի չէ նաեւ Ստ. Օրբէլեանի կողմից Թագուհուն տրուած* Կատա *անունը: Պէտք է մտածել, որ կա՛մ Բաղաց Թագաւորի դուստրն ունեցել է կրկնակ անուն, կա՛մ էլ պատմիչն է անունը չփոթել: Ուրիշ կերպ չի կարող լինել, որովհետեւ նոյն Օրբէլեան պատմիչի միւս տեղեկութիւններից գիտենք, որ միայն Գրիգոր Թագաւորի միակ դուստրն է ամուսնացել Խաչէնի իշխանազունի հետ, որի անունն էլ եղել է Հասան: Ըստ այսմ Թիւրիմացութիւն պիտի համարել Հասան Մեծի կնոջ Մամքան անունը (*Բ. Ա. Ուլուբաբեան*, Խաչէնի իշխանութիւնը X-XVI դարերում, էջ 85 եւ «Առանչահիկների տոհմածառը»)»*[108]*:*

Յաւելենք, որ Ստեփաննոս Օրբէլեանը Սիւնիքում Հասան Խաչէնցու կարճատեւ գահակալումը Թուագրում է 1166-1170 Թթ.,

---

106 Տե՛ս **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. Կ, էջ 233:

107 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 29 (N 59), էջ 40-41 (N 83), էջ 80 (N 239): Հմմտ. ստորեւ, ծնթ. 219: Վիմագրերում իշխանը կոչուած է ե՛ւ *Հասան*, ե՛ւ *Ջալալ*, ե՛ւ *Դալլա*, ե՛ւ *Հասան Ջալալ*, ե՛ւ *Ջալալ Դալլա*: *Դիւան*-ի V պրակում եւ այլ վիմագրական ժողովածուներում հրատարակուածներին պէտք է աւելացնել նախորդ տասնամեակի սկզբին Համլետ Պետրոսեանի յայտնաբերած 10 տողանոց արձանագրութիւնը (**Г. Л. Петросян,** *Новонайденный хачкар из Арачадзора*, — ԼՀԳ, 1991, թիւ 4, էջ 147-152): Խօսուածքային ոճով բնագիրն է (փոքր սրբագրումներով՝ ըստ լուսանկարի եւ գրչանկարի). «Թվ^{հն} :ՉՁ: *[=1257 թ.]*: Իշխանութի^{ւն}ն *Ջալալ/ին*, պատրոնութ^{եամ}բն *Հասանայ*, / եւ՝ Սահլուն, գնացել եմ ի Մուլո/ւդն ու գնացել եմ ի Սոնեթ ու գն/ացել եմ ի Կ*ա*սարիայ, ու :Բ: հետի / ի *ա*ռազմ եմ մտել ու խաղաղութ/ի^{ւն} դու*ս* եկել: Կանգնեցի խաչս ինձ եւ ա/մուս[ն]ոյ իմո. յաղաւթս յիշ/է՛ք. յաղաւթս յիշեցէ՛ք»:

108 **Բ. Ա. Ուլուբաբեան**, *Գանձասար*, էջ 155: Հասան Մեծի՝ երկու անգամ ամուսնացած լինելը (Կատայի եւ Մամախաթունի հետ), ինչպէս նշեցինք վերեւում, իրաւացիօրէն ընդունուած է նաեւ Կիրիլ Թումանովի կողմից (տե՛ս ծնթ. 100):